Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-258-11.05.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» 2020 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-240-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետի «գ» ենթակետում «իր հետ փոխկապակցված» բառերը փոխարինել «այլ» բառով.

2) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11) պաշտոնատար անձ՝ անձ, ով իր զբաղեցրած պաշտոնի ուժով ուսումնասիրություն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ կամ անձ, որը զբաղեցրել է այդպիսի պաշտոն կամ անձ, որը զբաղեցրել է այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթներին նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձն ուսումնասիրությունն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության ստուգման արդյունքում իրավասու մարմինը տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-րդ մասով.

«2.1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքում ուսումնասիրություն սկսելու հիմքեր հայտնաբերելուց հետո՝ տասնօրյա ժամկետում իրավասու մարմինը որոշում է կայացնում նոր ուսումնասիրություն սկսելու մասին:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «տեսակի» բառը:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երեք տարի:»:

Հոդված 6. Օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասում «կետով» բառը փոխարինել «մասով» բառով:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածի 2-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) իրավասու մարմնին հայտնի տվյալներ՝ ձեռք բերված գույքի տեսակի, շուկայական արժեքի և այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ.»:

Հոդված 8. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ապա դատարանի որոշմամբ, համապատասխան պահանջի առկայության դեպքում, պատասխանողից կարող է բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքի ձեռքբերման արժեքի չափով գումար:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով.

«4.1. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, ապա իրավասու մարմինը կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի ձեռքբերման արժեքի չափով գումարի բռնագանձում, եթե առկա չեն այդ գույքի՝ հայցի ներկայացման պահի դրությամբ շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկություններ:».

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը ծանրաբեռնված է այլ անձանց՝ սույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտպանվող իրավունքներով, ապա իրավասու մարմինն իր ընտրությամբ կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում կամ հայցի ներկայացման պահի դրությամբ այդպիսի գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքի ձեռքբերման արժեքի չափով գումարի բռնագանձում:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կարող է կայացվել նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների տվյալներով:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ժամկետը տարածվում է նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ուսումնասիրությունների վրա:

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների վրա:

~~Առաջին ընթերցում~~

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-258-11.05.2022-ՊԻ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» 2020 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-240-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետի «գ» ենթակետում «իր հետ փոխկապակցված» բառերը փոխարինել «այլ» բառով.

2) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11) պաշտոնատար անձ՝ անձ, ով իր զբաղեցրած պաշտոնի ուժով ուսումնասիրություն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ կամ անձ, որը զբաղեցրել է այդպիսի պաշտոն կամ անձ, որը զբաղեցրել է այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն: Անձը համարվում է համարժեք պաշտոն զբաղեցրած, եթե իր իրականացրած գործառույթներին նույնական կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող անձն ուսումնասիրությունն սկսելու պահին «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով նախատեսված ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության ստուգման արդյունքում իրավասու մարմինը տասնօրյա ժամկետում որոշում է կայացնում ուսումնասիրություն սկսելու կամ ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-րդ մասով.

«2.1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքում ուսումնասիրություն սկսելու հիմքեր հայտնաբերելուց հետո՝ տասնօրյա ժամկետում իրավասու մարմինը որոշում է կայացնում նոր ուսումնասիրություն սկսելու մասին:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ձեռք բերված տվյալներով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ պաշտոնատար անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «տեսակի» բառը:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ուսումնասիրությունը կարող է տևել առավելագույնը երեք տարի:»:

Հոդված 6. Օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասում «կետով» բառը փոխարինել «մասով» բառով:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածի 2-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) իրավասու մարմնին հայտնի տվյալներ՝ ձեռք բերված գույքի տեսակի, շուկայական արժեքի և այլ անձանց իրավունքներով ծանրաբեռնված լինելու վերաբերյալ.»:

Հոդված 8. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ապա դատարանի որոշմամբ, համապատասխան պահանջի առկայության դեպքում, պատասխանողից կարող է բռնագանձվել հայցի ներկայացման պահի դրությամբ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքի ձեռքբերման արժեքի չափով գումար:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով.

«4.1. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, ապա իրավասու մարմինը կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի ձեռքբերման արժեքի չափով գումարի բռնագանձում, եթե առկա չեն այդ գույքի՝ հայցի ներկայացման պահի դրությամբ շուկայական արժեքի վերաբերյալ տեղեկություններ:».

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե ապօրինի ծագում ունեցող գույքը ծանրաբեռնված է այլ անձանց՝ սույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պաշտպանվող իրավունքներով, ապա իրավասու մարմինն իր ընտրությամբ կարող է պահանջել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում կամ հայցի ներկայացման պահի դրությամբ այդպիսի գույքի շուկայական արժեքի, իսկ շուկայական արժեքի պարզման անհնարինության դեպքում՝ այդ գույքի ձեռքբերման արժեքի չափով գումարի բռնագանձում:»:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կարող է կայացվել նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների տվյալներով: ~~սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված կամ դրանից հետո նախաձեռնված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների տվյալներով:~~

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ժամկետը տարածվում է նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ուսումնասիրությունների վրա: ~~սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված կամ դրանից հետո նախաձեռնված ուսումնասիրությունների վրա:~~

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների վրա: ~~սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված կամ դրանից հետո նախաձեռնված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների վրա:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-258-11.05.2022-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով ուսումնասիրություն սկսելու մասին որոշում կարող է կայացվել նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների տվյալներով:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված ժամկետը տարածվում է նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ուսումնասիրությունների վրա:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

3.	ՀՀ Կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Սույն օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները տարածվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին չավարտված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների վրա:»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: